Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 03-01-2024 թ. որոշմամբ
««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ»»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 49-9 չկա
1.3 Պետական գրանցման համարը		286.160.04455
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2002-01-23
1.5 ՀՎՀՀ-ն		02560522
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)91192514
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		chessacademy.am
1.8 Էլեկտրոնային փոստը		chessacademy@gmail.com
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Սմբատ Լպուտյան		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	77	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Շախմատի դասագրքերի, տետրերի տպագրություն	70,257,600
	Շախմատիստների պատրաստման ծառայություններ	159,049,800
	Շախմատի դասագրքերի, տետրերի ստեղծում	6,300,000
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Միջազգային և այլ մրցաշարերի կազմակերպում	17,000,000

Digitally signed by
LPUTYAN SMBAT
2402580348
Date: 2024.07.09
16:04:39 AMST

8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Շախմատիստների պատրաստման ծառայություններ	149,494,000	
Շախմատի դասագրքերի, տետրերի տպագրություն	46,118,792	
Միջազգային և այլ մրցաշարերի կազմակերպում	30,717,000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	250,773,000	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	226,329,792	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 33 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ԱԿԱԴԵՄԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

2023թ.

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևան-2024

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն 3

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 6

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 7

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 8

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 9

2023թ. ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 10

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ
Երևան, Գյուլբենկյան 30/3, գրասենյակ 129
Հեռախոս՝ +374 10 229021, +374 60 529021
Էլ. փոստ՝ office@anaudit.am

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Հայաստանի շախմատի ակադեմիա» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի շախմատի ակադեմիա» Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) և նրա դուստր ընկերության (միասին՝ Խումբ) 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա կից ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝ առ 31 դեկտեմբերի 2023թ. ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը և համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն-ները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթների ամփոփագիրը:

Մեր կարծիքով համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Խմբի՝ առ 31 դեկտեմբերի 2023թ. համախմբված ֆինանսական վիճակը և այդ ամսաթվին ավարտվող տարվա գործունեության համախմբված արդյունքներն ու համախմբված դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ-ներ) համապատասխան:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների այս աուդիտի նկատմամբ կիրառելի անկախության և էթիկայի պահանջներին համապատասխան, և մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք համոզված ենք, որ մեր ձեռք բերած աուդիտորական ապացույցները բավարար են ու համապատասխան, որպեսզի հիմք ապահովեն մեր կարծիքի համար:

Ղեկավարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Խմբի գործադիր ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի էական անճշտություններից (թե՛ սխալի, թե՛ խարդախության արդյունքում առաջացող) զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հնարավորություն ընձեռելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ գործադիր ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարելու Խումբը, կամ դադարեցնելու դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը պատասխանատու է Խմբի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակներն են՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացող էական անճշտություններից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի գոյություն ունեցող էական անճշտությունը: Անճշտություններ կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև՝

- նույնականացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական անճշտության ռիսկերը, այդ ռիսկերից ելնելով նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են ապահովում մեր կարծիքի համար: Խարդախությունից առաջացող էական անճշտության չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալից առաջացողինը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության համակարգի մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների ու կից բացահայտումների հիմնավորվածությունը.
- եզրահանգում ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն կապված դեպքերի կամ պայմանների հետ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ առկա է էական անորոշություն, ապա մենք պետք է մեր աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդպիսի բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում, ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են ընդհուպ մինչև մեր աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ պայմանները կարող են պատճառ հանդիսանալ, որ Խումբն այլևս չհամարվի անընդհատ գործող.
- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, և այն, թե արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատկերում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվի ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգի նշանակալի թերությունների մասին:

Սույն անկախ աուդիտորի եզրակացության համար հիմք հանդիսացած աուդիտի իրականացման համար պատասխանատու է՝

Արթուր Հարությունյան

Տնօրեն, որակավորված աուդիտոր,
ՀԳԳՀ՝ 2 20 0017

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ

Երևան

10 հունիսի 2024թ.

Արմինե Ասոյան

Աուդիտի մենեջեր, որակավորված աուդիտոր,
ՀԳԳՀ՝ 2 23 0805

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծան.	31.12.2023թ.	31.12.2022թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	6	509,647	524,734
Ներդրումային գույք	7	125,200	123,449
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**634,847**	**648,183**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	8	4,037	4,459
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	9	1,300	3,443
Դրամական միջոցներ	10	19,255	7,589
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**24,592**	**15,491**
Ընդամենը ակտիվներ		**659,439**	**663,674**
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կուտակված շահույթ (վնաս)		46,356	44,342
Ընդամենը սեփական կապիտալ		**46,356**	**44,342**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	461,625	476,774
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**461,625**	**476,774**
Ընթացիկ պարտավորություններ			
Կապակցված կողմերից ստացված փոխառություններ	12	128,400	123,449
Կրեդիտորական պարտքեր հարկերի և մատակարարների գծով		15,414	11,961
Շահութահարկի գծով պարտավորություն		854	-
Պայմանագրերի գծով պարտավորություն (ստացված կանխավճարներ)		-	60
Ընթացիկ պահուստներ	14	6,790	7,088
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**151,458**	**142,558**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**659,439**	**663,674**

Տնօրեն
Սմբատ Լպուտյան

Գլխավոր հաշվապահ
Արմինե Սարգսյան

07 հունիսի 2024թ.

02560522
ՀԻՄՆԱԴՐԱՄ
ФОНД
FUND

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 10-ից 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծան.	2023թ.	2022թ.
Հասույթ	15	103,894	118,932
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամուտ	13	132,541	132,032
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	11	15,149	16,031
Նվիրաբերություններից եկամուտ	16	17,060	9,943
Ներդրումային գույքի իրական արժեքի վերաչափումից օգուտ	7	1,751	44,889
Փոխառության իրական արժեքի վերաչափումից կորուստ	12	(1,751)	(44,889)
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր		(149,494)	(152,303)
Մրցաշարերի կազմակերպման ծախսեր	17	(30,717)	(38,239)
Գրքերի տպագրության ծառայություն		(46,119)	(65,631)
Նվիրաբերությունների գծով ծախսեր	18	(816)	(1,698)
Հիմնական միջոցների մաշվածության ծախսեր		(15,149)	(16,031)
Հիմնական միջոցների նորոգման, սպասարկման և պահպանման ծախսեր		(1,126)	(1,197)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր		(2,808)	(2,264)
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր		(958)	(1,559)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(10,192)	(10,458)
Տրանսպորտային ծախսեր		(2,820)	(5,085)
Հիմնական միջոցների օտարումից եկամուտ		128	5,655
Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ (կորուստ)		18	(34)
Այլ ծախսեր		(5,723)	(6,648)
Շահույթ (վնաս) նախքան շահութահարկով հարկումը		**2,868**	**(18,554)**
Շահութահարկի գծով ծախս		(854)	-
Շահույթ (վնաս) և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար		**2,014**	**(18,554)**

Տնօրեն
Սմբատ Լպուտյան

Գլխավոր հաշվապահ
Արմինե Սարգսյան

02560522
ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՓՈՍՏ
FUND

07 հունիսի 2024թ.

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 10-ից 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված շահույթ (վնաս)	Ընդամենը Սեփական կապիտալ
Մնացորդն առ 1 հունվարի 2022թ.	**62,896**	**62,896**
Հաշվետու տարվա շահույթ (վնաս)	(18,554)	**(18,554)**
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.	**44,342**	**44,342**

Հազար դրամ	Կուտակված շահույթ (վնաս)	Ընդամենը Սեփական կապիտալ
Մնացորդն առ 1 հունվարի 2023թ.	**44,342**	**44,342**
Հաշվետու տարվա շահույթ (վնաս)	2,014	**2,014**
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.	**46,356**	**46,356**

Տնօրեն

Սմբատ Լազարյան

02560522
ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՖՈՆԴ
FUND

07 հունիսի 2024թ.

Գլխավոր հաշվապահ

Արմինե Սարգսյան

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Որպես շնորհ ստացված դրամական միջոցներ	159,050	158,439
Պաշարների իրացումից, ծառայությունների մատուցումից և վարձակալության տրամադրումից դրամական միջոցների մուտքեր	108,881	125,002
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(155,860)	(159,329)
Պաշարների ձեռքբերում	(75,346)	(97,665)
Վճարումներ ծառայությունների դիմաց	(3,022)	(4,057)
Մրցաշարերի անցկացման հետ կապված դրամական միջոցների ելքեր	(14,616)	(20,454)
Վճարված հարկեր և այլ պարտադիր վճարներ՝ բացի շահութահարկից	(27,962)	(25,190)
Վճարված շահութահարկ	-	-
Այլ մուտքեր	17,753	9,943
Այլ ելքեր	(493)	(506)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**8,385**	**(13,817)**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների օտարումից մուտքեր	153	6,606
Հիմնական միջոցների ձեռքբերման համար ելքեր	(90)	(9,151)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**63**	**(2,545)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառությունների ստացում	9,200	2,500
Փոխառությունների մարում	(6,000)	(2,500)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**3,200**	-
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**11,648**	**(16,362)**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	18	(72)
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի	**7,589**	**24,023**
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	**19,255**	**7,589**

Տնօրեն
Սմբատ Լալուտյան

Գլխավոր հաշվապահ
Արմինե Սարգսյան

07 հունիսի 2024թ.

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 10-ից 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

2023թ. ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հայաստանի շախմատի ակադեմիա» Հիմնադրամը (այսուհետ՝ «Հիմնադրամ», դուստր ընկերության հետ միասին՝ «Խումբ») կանոնադրության հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, մշակութային, կրթական և այլ հանրօգուտ նպատակներ:

Հիմնադրամը ստեղծվել է 2002թ. հունվարի 23-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Հիմնադրամի նպատակն է.

- նպաստել Հայաստանում շախմատի զարգացմանն ու ծավալմանը,
- նպաստել շախմատային դպրոցների, ակումբների և խմբակների նյութատեխնիկական ապահովման ընդլայնմանը,
- աջակցել շախմատային կյանքի տարածմանն ու լուսաբանմանը,
- կազմակերպել միջազգային, հանրապետական և այլ բնույթի շախմատային մրցաշարեր,
- համագործակցել միջազգային նմանատիպ կազմակերպությունների հետ գործունեություն համակարգելու, համատեղ մշակումներին ու ծրագրերին մասնակցելու նպատակով:

Հիմնադրամի

Անվանումը՝	«Հայաստանի շախմատի ակադեմիա» Հիմնադրամ
Գրանցման համարը՝	286.160.04455
Գրանցման վկայականը՝	03Ա 053276
Գրանցման ամսաթիվը՝	23.01.2002թ.
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Շնչենկո 34
Հարկ վճարողի հաշվառման համարը՝	02560522

Հիմնադրամի հիմնադիրն է Սմբատ Լպուտյանը:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է երեք անդամից.

- Խորհրդի նախագահ՝ Գալուստ Գալստյան
- Խորհրդի անդամ՝ Արամ Հաջյան
- Խորհրդի անդամ՝ Ռուբեն Մկրտչյան

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են «Շախմատի ակադեմիայի ակումբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Դուստր ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները: Դուստր ընկերությունում Հիմնադրամի մասնաբաժինը 100% է: Դուստր ընկերությունը ստեղծվել է 2023թ-ի ապրիլի 4-ին՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Դուստր ընկերության հիմնական գործունեությունը շախմատային դասընթացների կազմակերպումն է:

Դուստր ընկերության

Անվանումը՝	«Շախմատի ակադեմիայի ակումբ» ՍՊԸ
Գրանցման համարը՝	269.110.1308733
Գրանցման ամսաթիվը՝	04.04.2023թ.
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Շնչենկո 34
Հարկ վճարողի հաշվառման համարը՝	02308854

31 դեկտեմբերի 2023թ. դրությամբ խմբի աշխատակիցների ցուցակային թվաքանակը կազմել է 77 հոգի (31 դեկտեմբերի 2022թ.՝ 72 հոգի):

2. Պատրաստման հիմքերը և ստորագրումը

2.1. Հայտարարություն համապատասխանության մասին

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին («ՖՀՄՍ») համապատասխան: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով Հիմնադրամի ղեկավարության այն գնահատման վրա, որ Խումբը չունի մտադրություն կամ պատճառ կամ անհրաժեշտություն կանխատեսելի ապագայում իր գործունեությունը դադարեցնելու կամ էականորեն կրճատելու, և անընդհատության հիմունքի կիրառումը շարունակում է տեղին լինել:

2.2. Չափման հիմունքը

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ ներդրումային գույքի և ֆինանսական գործիքների, որոնց սկզբնական և հետագա չափումները համապատասխանաբար իրականացվում են իրական արժեքի հիմունքով:

2.3. Ներկայացման և ֆունկցիոնալ արժույթը

ՀՀ ազգային արժույթը ՀՀ դրամն է, որը Խմբի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ներկայացված ամբողջ համախմբված ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար դրամը:

2.4. Ստորագրումը

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. հունիսի 7-ին Հիմնադրամի տնօրեն Սմբատ Լպուտյանի և գլխավոր հաշվապահ Արմինե Սարգսյանի կողմից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1. Համախմբման հիմքերը

Խմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են Հիմնադրամի և իր Դուստր Ընկերության՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Դուստր Ընկերության հաշվետու ամսաթիվը ևս դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Հիմնադրամի և իր Դուստր ընկերության միջև բոլոր գործարքներն ու մնացորդները բացառվում են, ներառյալ գործարքների արդյունքում առաջացած չվաստակած օգուտները և չկրած վնասները:

Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվություններում հայտարարված գումարներն անհրաժեշտության դեպքում ճշգրտվել են, որպեսզի ապահովվի Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխանությունը:

3.2. Շնորհներ և նվիրատվություններ

Պետական շնորհները Խմբին ռեսուրսների փոխանցման տեսքով պետության (պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու միջազգային կազմակերպությունների) կողմից տրամադրվող օգնություն են՝ Խմբի գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի պայմաններին անցյալում կամ ապագայում համապատասխանության դիմաց: Այլ՝ մասնավոր, ոչ պետական հաստատություններից, բարեգործական կազմակերպություններից ստացված շնորհները համանմանության սկզբունքով հաշվառվում են ինչպես պետական շնորհները: Սակայն, եթե ստացված միջոցներին (ռեսուրսներին) կից՝ Խմբի գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի, կոնկրետ պայմաններ առկա չեն (օրինակ՝ տրամադրվել են Խմբի ընդհանուր գործառնական, կանոնադրական նպատակներով օգտագործվելու համար), ապա միջոցների այդպիսի ստացումը չի դիտվում որպես շնորհ, այլ դիտվում է որպես նվիրաբերություն կամ նվիրատվություն՝ կախված այլ համապատասխան հանգամանքներից:

Շնորհները չեն ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Խումբը կատարելու է դրանց կից բոլոր պայմանները, և որ շնորհները ստացվելու են:

i. Ակտիվներին վերաբերող շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները նրանք են, որոնց հիմնական պայմանն այն է, որ Խումբը գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի ոչ ընթացիկ ակտիվներ: Դրանք ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկ հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ոչ դրամային ակտիվի ձևով ստացված շնորհները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչվում են անվանական արժեքով, իսկ նման արժեքի բացակայության դեպքում՝ գնահատված իրական արժեքով և սիստեմատիկ հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում կամ այդ ակտիվի սպառումից առաջացող օգուտներին զուգընթաց:

ii. Եկամուտներին վերաբերող շնորհներ

Շնորհները, որոնք չեն դասակարգվում որպես ակտիվներին վերաբերող, համարվում են եկամուտներին վերաբերող: Դրանք ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես այլ եկամուտ սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Խումբը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները:

iii. Նվիրատվություններ

Նվիրատվությունները և առանց կոնկրետ պայմանների տրված նվիրաբերությունները որպես եկամուտ են ճանաչվում դրանց ստացման պահին:

3.3. Ներդրումային գույք

Ներդրումային գույքը վարձակալական եկամուտ և (կամ) երկար ժամկետում դրա արժեքի աճից եկամուտ ստանալու նպատակով պահվող գույք է (ներառյալ այդ նպատակների համար կառուցման ընթացքում գտնվող գույքը): Ներդրումային գույքը սկզբնապես չափվում է ինքնարժեքով, ներառյալ գործարքի հետ կապված ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը չափվում է իրական արժեքով: Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխություններից առաջացած օգուտներն ու կորուստները ներառվում են շահույթում կամ վնասում այն ժամանակահատվածում, երբ դրանք առաջանում են:

Իրական արժեքը սահմանվում է որպես գին, որը կստացվի շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվի վաճառքից կամ կվճարվի պարտավորությունների փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ:

ՖՀՄՍ 13-ը սահմանում է իրական արժեքների որոշման հիերարխիա, որն արտացոլում է իրական արժեքը ստանալու տարբեր եղանակների հարաբերական արժանահավատությունը:

(ա) Ակտիվ շուկա. գնանշվող գին (1-ին մակարդակ)

Դիտարկել ակտիվ շուկաներում նույնական ֆինանսական գործիքների համար գնանշվող գները:

(բ) Գնահատման մեթոդիկա դիտելի ելակետային տվյալների օգտագործմամբ (2-րդ մակարդակ)

Դիտարկել ակտիվ շուկաներում համանման ֆինանսական գործիքների համար գնանշվող գները կամ ոչ ակտիվ շուկաներում նույնական կամ համանման գործիքների համար գնանշվող գները, կամ օգտագործել գնահատման մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալները դիտելի են:

(գ) Գնահատման մեթոդիկա էական ոչ դիտելի ելակետային տվյալների օգտագործմամբ (3-րդ մակարդակ)

Օգտագործվում են գնահատման մեթոդներ, որոնցում օգտագործվող մեկ կամ ավելի էական ելակետային տվյալներ դիտելի չեն:

Ներդրումային գույքն ապաճանաչվում է օտարման ժամանակ, կամ, երբ ներդրումային գույքը մշտապես հանվում է օգտագործումից, և ապագա տնտեսական օգուտներ չեն ակնկալվում օտարումից:

3.4. Գնորդների հետ պայմանագրերից և այլ հասույթ

Հասույթը ժամանակաշրջանի ընթացքում խմբի սովորական գործունեությունից առաջացող եկամուտն է, այսինքն տնտեսական օգուտների ավելացումն է (ակտիվների ներհոսքի կամ աճի կամ պարտավորությունների նվազման տեսքով), որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ սեփական կապիտալում հիմնադիրների կողմից ներդրումների հետևանքով սեփական կապիտալի աճի: Հասույթ չի համարվում պետական շնորհներից և նվիրատվություններից ստացված եկամուտը:

Ներդրումային գույքը վարձակալության տալուց հասույթ ճանաչվում է գծային հիմունքով:

Գնորդների հետ պայմանագրերից հասույթը խումբը ճանաչում է, երբ բավարարվում են կատարողական պարտականությունները: Կատարողական պարտականությունները գնորդի հետ պայմանագրում նախատեսված խոստում են՝ փոխանցելու որոշակի ապրանքներ կամ ծառայություններ գնորդին: Կախված կատարողական պարտականության բնույթից՝ այն կարող է բավարարվել կամ ժամանակի ինչ-որ մի պահի, կամ էլ ժամանակի ընթացքում:

Խմբի սովորական գործունեության հասույթ բերող երկու ուղղություններն են.

- շախմատի դասագրքերի և տետրերի պատրաստումը << Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվերով,
- շախմատային մրցաշարերի կազմակերպումը:

Խումբը << Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվերով, պետական բյուջեից ֆինանսավորմամբ շախմատի դասագրքերի և տետրերի պատրաստման կատարողական պարտականությունը համարվում է բավարարված և ամբողջ հասույթը ճանաչվում է այն պահին, երբ համապատասխան դասագրքերն ու տետրերն պատրաստվել և հանձնվել են պատվիրատուի ներկայացուցչին, նույնիսկ երբ դրանք ամբողջությամբ կամ մասամբ ի պահ են թողնվում Խմբում՝ պատվիրատուի ցուցումով համապատասխան շահառուներին հետագայում բաշխելու նպատակով:

Շախմատային մրցաշարերի կազմակերպման գծով կատարողական պարտականությունը բավարարվում է ժամանակի ընթացքում: Կատարողական պարտականության լրիվ բավարարման ուղղությամբ Խմբի առաջընթացը չափվում է մրցաշարի խաղափուլերի ընդհանուր թվի մեջ ավարտված խաղափուլերի թվի համամասնությամբ: Մրցաշարերի մասնակիցներից ստացված մասնակցության վճարները (հանած մրցանակային ֆոնդին հատկացված միջոցները) հասույթ են ճանաչվում խաղափուլերի ավարտված և ընդհանուր թվերի համամասնությամբ: Մրցանակային ֆոնդին հատկացված միջոցները (ներառյալ՝ նշանակալի լինելու դեպքում մրցանակաբաշխության արարողության կազմակերպմանը վերագրվող ծախսերը) որպես եկամուտ ու ծախս են ճանաչվում մրցանակաբաշխությունը կատարելիս:

Այնքանով, որքանով Խմբի կողմից կատարողականին համապատասխան ճանաչված հասույթը գերազանցում է գնորդի կողմից վճարված հատուցումը, Խումբը ճանաչում է «պայմանագրի գծով ակտիվ», իսկ եթե գնորդից ստացված հատուցման գումարն է գերազանցում կատարողականին համապատասխան ճանաչված հասույթը, ապա տարբերությունը ճանաչվում է որպես «պայմանագրի գծով պարտավորություն»: Գնորդից անվերապահ ստացման ենթակա հատուցումը առանձնացվում է պայմանագրի գծով ակտիվից և ներկայացվում է որպես դեբիտորական պարտք:

3.5. Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

ա) աշխատավարձը,

բ) կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսին է վճարովի տարեկան արձակուրդը և ժամանակավոր անաշխատունակության նպաստը,

գ) պարգևավճարները:

Աշխատակիցների հատուցումների այն գումարը, որն ակնկալվում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աշխատակիցներից ստացված ծառայության դիմաց, ճանաչվում է՝ ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո, և բ) որպես ծախս, բացառությամբ, երբ որևէ ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է այդ հատուցումների ներառումը որևէ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մեջ: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների գումարը, ապա Խումբն այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ (կանխավճարված ծախս) այնքանով, որքանով այդ կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների նվազման կամ դրամական միջոցների վերադարձի:

Խումբն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները՝ կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ձևով (ինչպիսին է վճարովի ամենամյա արձակուրդը) ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որն ավելացնում է ապագա փոխհատուցելի բացակայությունների նրանց իրավունքը: Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափվում են այն լրացուցիչ գումարով, որը Խումբն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

Խումբը պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչում է, երբ՝ ա) այն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և բ) պարտականությունը կարող է արժանահավատորեն գնահատվել: Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբը պարտականության կատարումից խուսափելու որևէ իրատեսական հնարավորություն չունի:

3.6. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Խումբ, և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ ճանաչելուց հետո հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է գնման գինը, ներառյալ՝ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը, հանած առևտրային զեղչերը և արտոնությունները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսումները: Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում ծախսումների ճանաչումը դադարեցվում է, երբ միավորը գտնվում է այն վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել ղեկավարության նախանշած նպատակներով:

Սկզբնական արժեքը ներառում է մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները: Այս ակտիվների մաշվածությունը ևս հաշվարկվում է, երբ դրանք դառնում են պատրաստ՝ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի միավորի օտարումից կամ դուրսգրումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է

որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն: Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորն ապաճանաչվում է:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցիչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ճանաչվում է հաշվեկշռային արժեքում, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Պահպանման և ընթացիկ սպասարկման, վերանորոգման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակաշրջանում:

Ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն, երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ ՖՀՄՍ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանց մաշվածությունը հաշվարկվում է առանձին:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

○ Շենքեր, շինություններ	50 տարի
○ Տրանսպորտային միջոցներ	5-8 տարի
○ Մեքենաներ և սարքավորումներ	1-5 տարի
○ Արտադրական, տնտեսական գույք	1-8 տարի
○ Համակարգչային տեխնիկա	1 տարի
○ Այլ հիմնական միջոցներ	1-30 տարի

3.7. Վարձակալություն

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, երբ վարձակալության պայմաններով սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են վարձակալին: Մյուս բոլոր վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն:

Գործառնական վարձակալությունից եկամուտը գծային հիմունքով ճանաչվում է համապատասխան վարձակալության ժամկետում: Գործառնական վարձակալության գծով բանակցելու և պայմանագիր կնքելու ընթացքում կրած սկզբնական ուղղակի ծախսումները գումարվում են վարձակալության տրված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում են գծային հիմունքով վարձակալության ժամանակաշրջանում:

3.8. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամական միջոցները, բանկերում բացված հաշվարկային հաշիվները, սկզբնապես մինչև երեք ամիս մարման ժամկետով կարճաժամկետ բանկային ավանդները:

3.9. Արտարժութային գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային

հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

3.10. Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը որոշվում է կիրառելով «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևը:

3.11. Ֆինանսական գործիքներ

(i) Սկզբնական ճանաչումը և չափումը

Խումբը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով՝ գումարած, այն դեպքում, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսով տրամադրած կամ ստացած փոխառությունները, երկարաժամկետ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերը չափվում են ոչ թե անվանական արժեքով, ոչ թե այդ պահին տրված կամ ստացված հատուցման չափով, այլ իրական արժեքով, որը որոշվում է դրանց գծով պայմանագրային ապագա դրամական հոսքերը զեղչելով՝ կիրառելով համապատասխան ժամկետայնության և ռիսկայնության գործիքների համար գերակշռող շուկայական տոկոսադրույքները: Սկզբնական չափման համար որոշված իրական արժեքի և տրված կամ ստացված հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ, երբ դա պետական շնորհի մաս է կազմում, որի դեպքում կիրառվում են «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ՀՀՄՍ 20-ով սահմանված մոտեցումները:

(ii) Ապաճանաչումը

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (լրանում է ուժի մեջ լինելու ժամկետը), կամ

բ) այն փոխանցում է ֆինանսական ակտիվը, և փոխանցումը ստորև շարադրվածին համապատասխան որակվում է որպես ապաճանաչման պայմանները բավարարող:

Ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում, կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակումը պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն

ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական պարտավորության մի մասի) հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ փոխանցված ցանկացած ոչ դրամական ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(iii) Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո տրամադրած և ստացած փոխառությունները, ավանդները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունքային տոկոսադրույքի մեթոդը: Կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքերը սովորաբար չափվում են անվանական գումարով: Ցպահանջ պարտավորությունները չափվում են այն գումարով, որով ենթակա են մարման պահանջը ներկայացվելու դեպքում:

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Խումբն այլ կազմակերպությունների բաժնային գործիքներում (բաժնետոմսերում) ներդրումներ չունի:

(iv) Արժեզրկում

Բոլոր ֆինանսական ակտիվների (բացի «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» դասակարգվածներից) և պայմանագրերի գծով ակտիվների համար Խումբը ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) պահուստ՝ այդ ակտիվների սկզբնական ճանաչման պահին, ինչպես նաև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Սկզբնական ճանաչման ժամանակ ԱՊԿ պահուստը չափվում է 12-ամսյա ժամանակաշրջանում ակնկալվող պարտքային կորուստների մեծությամբ: Եթե սկզբնական ճանաչումից հետո որևէ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ, ապա այդ ֆինանսական ակտիվի գծով ԱՊԿ պահուստը չափվում է մինչև մարումը մնացած ամբողջ ժամանակաշրջանում ակնկալվող պարտքային կորուստների մեծությամբ: ԱՊԿ-ն պարտքային կորուստների՝ հավանականություններով կշռված գնահատականն է: Պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական պակասուրդների (այսինքն՝ գործիքի պայմաններին համաձայն Խմբին հասանելիք դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի միջև տարբերությունը, որոնք Խումբն ակնկալում է ստանալ) ներկա արժեք՝ զեղչված ֆինանսական ակտիվի արդյունքային տոկոսադրույքով: ԱՊԿ պահուստը և դրա հետագա փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում: ԱՊԿ պահուստը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացվում է որպես համապատասխան ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքի նվազեցում:

3.12. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարն ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ

դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլիներին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.13. Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարն իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք ակնկալվում է, որ կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Ձեղչման դրույքն այն դրույքն է՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Ձեղչման դրույքը չի արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականն արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է: Պահուստն օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

4. Գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ-ին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Խմբի ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գումարների վրա և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների ու ծախսերի մեծության վրա: Գնահատումները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա՝ ներառյալ ապագա իրադարձությունների սպասումները, որոնք ողջամիտ են որոշակի հանգամանքներում: Այնուամենայնիվ, այս ենթադրությունների և գնահատականների վերաբերյալ անորոշությունը կարող է բերել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական փոփոխություններ:

4.1. Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային հնացածությունը (մաշվածությունը), հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցման: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Խումբը կանխատեսում է ստանալ օգուտներ: Հաշվի են առնված հետևյալ հիմնական գործոնները. ակտիվների

կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

4.2. Ակտիվների արժեզրկումը

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Խումբը գնահատում է ակտիվների փոխհատուցվող գումարի՝ հաշվեկշռային արժեքից հնարավոր նվազման հայտանիշները: Փոխհատուցվող գումարն իրենից ներկայացնում է օգտագործման արժեքից և «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսեր»-ից առավելագույնը: Եթե փոխհատուցվող գումարը փոքր է հաշվեկշռային արժեքից, ապա վերջինս տարբերության չափով պետք է նվազեցվի՝ որպես արժեզրկումից կորուստ: Արժեզրկումից կորուստ ճանաչվում է շահույթում կամ վնասում այն ժամանակահատվածում, որում նվազումը կատարվել է:

Ներկայումս գոյություն չունեցող անցյալ պայմանների ազդեցությունը վերացնելու և անցյալում գոյություն չունեցող, բայց ներկայումս առկա պայմանների ազդեցությունն արտացոլելու նպատակով անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտելի և ապագային միտված տվյալների հիման վրա:

4.3. Հարկային օրենսդրություն

Հայաստանի Հանրապետությունում հարկային օրենսդրության համապատասխանությունը մեկնաբանությունների առարկա է հանդիսանում, որոնք կատարվում են հարկային մարմինների կողմից: Խմբի անորոշ հարկային վիճակը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում վերագնահատվում է ղեկավարության կողմից: Շահութահարկի գծով պարտավորությունները որոշվում են ղեկավարության կողմից այն չափով, որ չառաջանան հարկային մարմինների կողմից լրացուցիչ պահանջներ հարկերի գծով:

Գնահատականները հիմնված են հարկային օրենսդրության մեկնաբանությունների և ցանկացած հայտնի դատարանի կամ այդ հարցերի գծով իրավասու մարմնի որոշման վրա, որոնք ընդունվել են կամ էականորեն ընդունվել են մինչև հաշվետու ժամանակաշրջանը: Տուգանքների, հարկերի (բացի շահութահարկից) գծով պարտավորությունները ճանաչվում են հաշվետու ժամանակաշրջանում՝ պարտավորությունը լուծելու համար անհրաժեշտ ծախսումների գծով ղեկավարության լավագույն գնահատականի հիման վրա:

4.4. Կապակցված կողմերի հետ գործարքներ

Իր սովորական գործունեության ընթացքում Խումբն իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Խումբը կիրառում է մասնագիտական դատողություն կապակցված կողմերի բացահայտման ուղղությամբ: Գնահատումն իրականացնելու համար Խումբը պարբերաբար հետևում է հոգաբարձուների խորհրդի անդամների նշանակալի մասնակցությանն այլ կազմակերպությունների կապիտալում, ինչպես նաև վերլուծում է յուրաքանչյուրի հետ գործարքի ծավալները:

4.5. Ներդրումային գույքի դասակարգում և իրական արժեքի որոշում

Խումբը դատողություններ է կիրառում գույքը՝ որպես հիմնական միջոց կամ ներդրումային գույք դասակարգելիս: Խմբի ներդրումային գույքն իրենից ներկայացնում է այն շենքը կամ շենքի մի մասը, որը չի պահվում ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման, կամ վարչական նպատակներով օգտագործելու համար և ոչ էլ սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, այլ վարձակալությունից եկամուտ վաստակելու կամ դրա արժեքի աճի կամ էլ անորոշ նպատակներով:

Ներդրումային գույքի իրական արժեքը որոշվում է՝ օգտագործելով գնահատման մեթոդներ, մասնավորապես հիմնվելով անշարժ գույքի շուկայում ամենավերջին համանման բնութագրերով և տեղադիրքով անշարժ գույքի գործարքների վերաբերյալ առկա տեղեկատվության վրա:

4.6. Գնորդի հետ պայմանագիր թե դրամաշնորհ

Խումբը դատողություններ է կիրառում՝ դրամաշնորհի պայմանագրերը որպես «գնորդի հետ

պայմանագիր» կամ որպես «պետական շնորհ» դասակարգելիս և համապատասխանաբար հաշվառելիս: ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից ստացված դրամաշնորհը կարող էր դասակարգվել որպես «գնորդի հետ պայմանագիր» և նույնականացնել դրա ներքո տրամադրվելիք առանձին ծառայությունները՝ շախմատի ակադեմիայի սաների համար ամենօրյա անվճար ուսուցման, գրոսմայստերների և վարպետների ուսումնամարզական հավաքների և մրցաշարերի կազմակերպում և այլն: Այնուամենայնիվ, դրամաշնորհը տրամադրվում է ըստ բնույթի (աշխատավարձ, նյութեր, կոմունալ և այլն) դասակարգված ծախսերը ֆինանսավորելու նպատակով (ըստ նպատակի չծախսված գումարը ենթակա է վերադարձման), և հատուցման ընդհանուր գումարի վերագրումը առանձին նույնականացվող ծառայություններին կլիներ խիստ սուբյեկտիվ: Ելնելով այդ նկատառումներից, դրամաշնորհը հաշվառվել է որպես պետական շնորհ, այլ ոչ թե որպես ծառայության մատուցում: Այլընտրանքային մոտեցումը ազդեցություն չէր թողնի շահույթի կամ վնասի մեծության վրա, պարզապես՝ եկամուտներին վերաբերող շնորհի գումարի փոխարեն նույն մեծությամբ ավել կլիներ հասույթի ցուցանիշը (տե՛ս ծանոթ. 13 և 15):

5. Նոր կամ փոփոխված ՖՀՄՍ-ներ

5.1. Նոր կամ փոփոխված ստանդարտների և մեկնաբանությունների կիրառում

Ստորև նկարագրված են ստանդարտների որոշ փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտել և Խմբի կողմից կիրառվել են 2023թ. հունվարի 1-ից: Նույն ամսաթվից ուժի մեջ են մտել նաև այլ ստանդարտների փոփոխություններ, որոնք կամ կիրառելի չեն եղել, կամ ազդեցություն չեն ունեցել Խմբի վրա:

- *«Պարտավորությունների ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգումը. փոփոխություններ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ում.»* (հրապարակվել է 2020թ. հունվարի 20-ին) պարտադիր կիրառման ենթակա է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Սրանով հստակեցվել են անորոշ մարման (կատարման) ժամկետ ունեցող պարտավորությունների ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման հետ կապված հարցեր: Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չի ունեցել, քանզի հստակեցված մոտեցումը համընկնում է Խմբում կիրառվողի հետ:
- *«Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանումը. փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում.»* (հրապարակվել է 2021թ. փետրվարին) պարտադիր կիրառման ենթակա է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

  Փոփոխություններով մասնավորապես հանվել է հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխության սահմանումը և փոխարենը սահմանվել է հաշվապահական հաշվառման գնահատումը՝ որպես ֆինանսական հաշվետվություններում պարունակվող դրամական գումար, որը ենթակա է չափման անորոշության: Այլ փոփոխություններով և լրացումներով հստակեցվում է հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների տարանջատումը: *Փոփոխությունները* Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չեն ունեցել:
- *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում. փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում.» (հրապարակվել է 2021թ. փետրվարին) պարտադիր կիրառման ենթակա է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

  ՀՀՄՍ 1-ի նախկին տեքստում պահանջվում էր բացահայտել «Նշանակալի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը»: Փոխարենը *Փոփոխություններով* պահանջվում է բացահայտել «հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն»: Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվությունը համարվում է էական, եթե ֆինանսական հաշվետվություններում պարունակվող այլ էական տեղեկատվության հետ

միասին դիտարկելով, կարող է ողջամտորեն ակնկալվել, որ ազդեցություն կունենա ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների կողմից կայացվող որոշումների վրա: Տրամադրվում են մանրամասներ և ցուցումներ էական տեղեկատվության վերաբերյալ: Նաև սահմանվում է, որ ոչ էական տեղեկատվությունը չպետք է բացահայտվի, իսկ բացահայտվելու դեպքում չպետք է «մշուշի» էական տեղեկատվությունը:

5.2. Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Հրապարակված, սակայն սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններով ծածկվող հաշվետու ժամանակաշրջանի համար դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտները բերված են ստորև: Այս ցանկն այն հրապարակված ստանդարտների և մեկնաբանությունների ցանկն է, որոնք Խմբի կանխատեսումներով կօգտագործվեն իր կողմից հետագայում: Խումբը մտադիր է ընդունել դրանք այն ժամանակ, երբ այդ ստանդարտներն ուժի մեջ կմտնեն:

- *«Վարձակալության գծով պարտավորությունը «Վաճառք և հետադարձ վարձակալություն» գործարքում» Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում* (հրապարակվել է 2022թ. սեպտեմբերին) պարտադիր կիրառման ենթակա է 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է՝ պայմանով, որ դա բացահայտվի: Այս փոփոխություններով պահանջվում է, որ վաճառող-վարձակալը հետադարձ վարձակալությունից առաջացող վարձակալության գծով պարտավորությունը չափի այնպես, որպեսզի հնարավոր չլինի ճանաչել վաճառքից օգուտ կամ կորուստ՝ պահպանված օգտագործման իրավունքի գծով: Առանց այս փոփոխությունների այդպիսի օգուտների կամ կորուստների ճանաչումը կարող է տեղի ունենալ վարձակալության գծով պարտավորությունների հետագա վերաչափման դեպքում:

  Խումբը չի ակնկալում, որ այս փոփոխությունները էական ազդեցություն կունենան իր համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա, քանզի Խումբը մինչ այս պահը չունի «Վաճառք և հետադարձ վարձակալություն» գործարքներ:

- *Փոփոխություններ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ում (Ոչ ընթացիկ պարտավորություններ կից պայմաններով (կովենանտներով)), հրապարակվել է 2022թ. հոկտեմբերին, պարտադիր կիրառման ենթակա է 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է՝ լրացուցիչ պայմանով և բացահայտումներով:*

  Փոփոխությունները սահմանում են, որ պարտավորությունը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելիս պետք է հաշվի առնվեն միայն այն պայմանները (կովենանտները), որոնք պարտավոր է կազմակերպությունը բավարարել հաշվետու ժամանակաշրջանի ավարտին կամ դրանից առաջ, որպեսզի իրավունք ունենա հետաձգելու պարտավորության մարումը հաշվետու ամսաթվից հետո առնվազն տասներկու ամսով: Այդպիսի կից պայմանները (կովենանտները) ազդում են այն բանի վրա, թե արդյոք իրավունքը գոյություն ունի հաշվետու ժամանակաշրջանի վերջում, նույնիսկ եթե համապատասխանությունը գնահատվում է միայն հաշվետու ամսաթվից հետո:

  Նաև հստակեցվում է, որ հաշվետու ամսաթվից հետո առնվազն տասներկու ամսով պարտավորության մարումը հետաձգելու իրավունքի վրա կովենանտը չի ազդում, եթե կազմակերպությունը պարտավոր է բավարարել դրան միայն հաշվետու ժամանակաշրջանից հետո: Այնուամենայնիվ, եթե կազմակերպության՝ պարտավորությունների մարումը հետաձգելու իրավունքը կախված է հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում պարտավորությանը կից պայմանները (կովենանտները) բավարարելուց, ապա կազմակերպությունը բացահայտում է տեղեկատվություն, որը ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին հնարավորություն է տալիս հասկանալ տասներկու ամսվա ընթացքում պարտավորությունների վերադարձելի դառնալու ռիսկը (մասնավորապես, տեղեկություններ հետևյալ պայմանների մասին՝ դրանց բնույթը, ժամկետները, հարակից պարտավորությունների հաշվեկշռային արժեքը և փաստերն ու հանգամանքները, եթե այդպիսիք

կան, որոնք ցույց են տալիս, որ կազմակերպությունը կարող է դժվարություններ ունենալ պահանջներին համապատասխանելու առումով):

Այս փոփոխությունների կիրառումը կարող է ազդեցություն ունենալ Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա ապագա ժամանակաշրջաններում:

- *«Միջազգային հարկային բարեփոխումներ. Երկրորդ հենասյան մոդելային կանոններ» Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում* (հրապարակվել է 2023թ. մայիսին): Պարտադիր կիրառման ենթակա է հետահայաց կերպով 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Այս փոփոխությունները վերաբերում են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից հրապարակված «Երկրորդ հենասյան մոդելային կանոնները» ներդնելու նպատակով ընդունված հարկային օրենքների (ներառյալ այդ կանոններում նկարագրված տեղական նվազագույնը լրացնող հարկերի) կիրառման արդյունքում առաջացող հարկերին (որոնք կոչվում են «Երկրորդ հենասյան հարկ»): *Փոփոխություններով* պահանջվում է, որ որպես ստանդարտի պահանջներից բացառություն, *Երկրորդ հենասյան հարկի* հետ կապված հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չճանաչվեն և դրանց գծով տեղեկատվություն չբացահայտվի: Այնուամենայնիվ, *Փոփոխություններով* պահանջվում է բացահայտել այդ բացառությունը կիրառելու փաստը, ինչպես նաև *Երկրորդ հենասյան հարկի* հետ կապված ընթացիկ հարկի գծով ծախսը (եկամուտը):

  Խումբը չի ակնկալում, որ այս փոփոխությունները էական ազդեցություն կունենան իր համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Մատակարարների ֆինանսավորման համաձայնագրեր» Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում և ՖՀՄՍ 7-ում:* Հրապարակվել է 2023թ. մայիսին, պարտադիր կիրառման ենթակա է հետահայաց կերպով 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է՝ պայմանով, որ դա բացահայտվի: *Մատակարարների ֆինանսավորման համաձայնագրեր* են կոչվում այն պայմանագրերը, որ կնքում է կազմակերպությունը երրորդ անձնաց (ֆինանսավորողների) հետ, որոնց համաձայն ֆինանսավորողները վճարում են Կազմակերպության մատակարարի պարտքը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է նույն կամ ավելի ուշ ամսաթվի վճարել ֆինանսավորողին: Այս փոփոխություններով պահանջվում է կատարել մի շարք բացահայտումներ, որոնք կօգնեն օգտագործողներին հասկանալու, թե ինչ ազդեցություն են թողնում *Մատակարարների ֆինանսավորման համաձայնագրերը* Կազմակերպության պարտավորությունների, դրամական հոսքերի և իրացվելիության ռիսկին ենթարկվածության վրա:

  Փոփոխություններով ՀՀՄՍ 7-ում ավելացվել է բացահայտման նպատակ, որը սահմանում է, որ կազմակերպությունը պարտավոր է բացահայտել տեղեկատվություն մատակարարների ֆինանսավորման համաձայնագրերի մասին, որը ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին հնարավորություն կտա գնահատել կազմակերպության պարտավորությունների և դրամական հոսքերի վրա դրանց ազդեցությունը: Ի լրումն, ՖՀՄՍ 7-ը փոփոխվել է, և կազմակերպության՝ իրացվելիության ռիսկի համակենտրոնացման ենթարկվածության մասին տեղեկատվության բացահայտման պահանջների շրջանակում որպես օրինակ ավելացվել է մատակարարների ֆինանսավորման համաձայնագրերը:

  Բացահայտման նպատակին հասնելու համար կազմակերպությունից կպահանջվի ընդհանուր առմամբ բացահայտել մատակարարների ֆինանսավորման համաձայնագրերի վերաբերյալ հետևյալը.

  - ✓ համաձայնագրերի պայմանները,
  - ✓ համաձայնագրերի մաս կազմող պարտավորությունների՝ կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված հաշվեկշռային արժեքը և համապատասխան տողերը,

- ✓ Հաշվեկշռային արժեքը և համապատասխան տողային հոդվածները, որոնց համար մատակարարներն արդեն վճարումներ են ստացել ֆինանսավորում տրամադրողներից,
- ✓ Վճարման ժամկետների միջակայքեր այն ֆինանսական պարտավորությունների համար, որոնք մատակարարների ֆինանսավորման համաձայնագրերի մաս են, ինչպես նաև համադրելի առևտրային կրեդիտորական պարտքերի համար, որոնք մատակարարների ֆինանսավորման համաձայնագրերի մաս չեն կազմում:
- ✓ Իրացվելիության ռիսկի մասին տեղեկատվություն:

Քանի որ Խումբը չունի մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ, չի ակնկալվում, որ այս փոփոխությունները ազդեցություն կունենան Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Ներկայացումը և բացահայտումը ֆինանսական հաշվետվություններում» ՖՀՄՍ 18-ը* հրապարակվել է 2024թ. ապրիլին, պարտադիր կիրառման ենթակա է հետահայաց կերպով 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է՝ պայմանով, որ դա բացահայտվի: ՖՀՄՍ 18-ը փոխարինում է «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ին, որի հիմնական պահանջները ոչ նշանակալի տերմինային փոփոխություններով տեղափոխվել են նոր ստանդարտի մեջ: Նոր ստանդարտը ազդեցություն չի թողնում ֆինանսական հաշվետվություններում եկամուտների և ծախսերի դասակարգման վրա, այլ միայն պահանջներ է սահմանում ֆինանսական հաշվետվություններում և բացահայտման գծով: Այստեղ կներկայացնենք դրանցից մի քանի ամենակարևորները.

  1) Պահանջվում է, որ շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ներկայացվեն երկու նոր ենթահանրագումարներ՝ ա) «գործառնական շահույթը կամ վնասը» և բ) «շահույթը կամ վնասը մինչև ֆինանսավորումը և շահութահարկը»:

  2) Բացի այդ, եկամուտներն ու ծախսերը պետք է դասակարգվեն երեք նոր կատեգորիաներում՝ գործառնական, ներդրումային և ֆինանսավորման:

  3) Նաև պահանջվում է, որ եթե կազմակերպությունը օգտագործում է ղեկավարության կողմից սահմանված լրացուցիչ կատարողականի ցուցանիշներ (օրինակ՝ EBITDA - շահույթը մինչև տոկոսները, հարկերը, մաշվածությունը և ամորտիզացիան), ապա այդպիսի ցուցանիշները պարտադիր պետք է ներկայացվեն ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, միաժամանակ բացատրելով, թե ինչու են այդ ցուցանիշներն օգտագործվում և ինչպես են հաշվարկվում:

Նշենք նաև, որ ի թիվս բազմաթիվ հետևանքային այլ փոփոխությունների, *«Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխություններ և սխալներ» ՀՀՄՍ 8-ը վերանվանվել է ՀՀՄՍ 8 «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները»:*

Ակնկալվում է, որ նոր ստանդարտն ուղղակի ազդեցություն կունենա Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա, սակայն այս փուլում այդպիսի ազդեցության գնահատական չկա:

- *«Հանրային հաշվետվականություն չունեցող դուստր կազմակերպություններ. բացահայտումներ» ՖՀՄՍ 19-ը* հրապարակվել է 2024թ. մայիսին, պարտադիր կիրառման ենթակա է հետահայաց կերպով 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է՝ պայմանով, որ դա բացահայտվի: Առաջին անգամ կիրառվելու դեպքում նախորդ ժամանակաշրջանների համադրելի թվերը պետք է վերաներկայացվեն (բացառությամբ, երբ այս կամ մեկ այլ ստանդարտ թույլատրում է հակառակը): Կան լրացուցիչ բացահայտումների կանոններ մասնավորապես այն դեպքի համար, երբ ՖՀՄՍ 19-ը կիրառվում է վաղաժամ նախքան ՖՀՄՍ 18-ը կիրառելը: ՖՀՄՍ 19-ը սահմանում է բացահայտման պահանջներ, որոնք Հանրային հաշվետվականություն չունեցող և դուստր հանդիսացող

կազմակերպությունը կարող է կիրառել՝ մյուս ՖՀՄՍ-ների բացահայտման պահանջների փոխարեն՝ պայմանով, որ նրա վերջնական կամ միջանկյալ մայր կազմակերպությունը պատրաստում է ՖՀՄՍ-ների համապատասխանող հանրության կողմից օգտագործման համար հասանելի ֆինանսական հաշվետվություններ: Չի ակնկալվում, որ ՖՀՄՍ 19-ը ազդեցություն կունենա Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Հիմնադրամը դուստր չի հանդիսանում:

6. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Շենքեր, շինություններ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական, տնտեսական գույք	Համակարգչային տեխնիկա	Այլ հիմնական միջոցներ	Հողամասեր	Ընդամենը
Արժեք								
Մնացորդ առ 01.01.2022թ.	653,197	3,909	12,626	68,648	10,081	13,587	25,065	787,114
Ավելացում	-	52	7,601	3,887	695	-	-	12,235
Նվազում	-	-	(8,769)	(782)	-	-	-	(9,551)
Մնացորդ առ 31.12.2022թ.	653,197	3,961	11,458	71,753	10,776	13,587	25,065	789,797
Մնացորդ առ 01.01.2023թ.	653,197	3,961	11,458	71,753	10,776	13,587	25,065	789,797
Ավելացում	-	-	-	75	-	-	-	75
Նվազում	-	-	-	(331)	-	-	-	(331)
Մնացորդ առ 31.12.2023թ.	653,197	3,961	11,458	71,497	10,776	13,587	25,065	789,541
Մաշվածություն								
Մնացորդ առ 01.01.2022թ.	156,767	3,140	12,316	68,126	9,952	8,281	-	258,582
Տարվա մաշվածություն	13,064	743	837	747	453	188	-	16,032
Նվազում	-	-	(8,769)	(782)	-	-	-	(9,551)
Մնացորդ առ 31.12.2022թ.	169,831	3,883	4,384	68,091	10,405	8,469	-	265,063
Մնացորդ առ 01.01.2023թ.	169,831	3,883	4,384	68,091	10,405	8,469	-	265,063
Տարվա մաշվածություն	13,064	24	950	552	372	187	-	15,149
Նվազում	-	-	-	(317)	-	-	-	(317)
Մնացորդ առ 31.12.2023թ.	182,895	3,907	5,334	68,326	10,777	8,656	-	279,895
Հաշվեկշռային արժեք								
Առ 31.12.2022թ.	**483,366**	**78**	**7,074**	**3,662**	**371**	**5,118**	**25,065**	**524,734**
Առ 31.12.2023թ.	**470,302**	**54**	**6,124**	**3,171**	**(1)**	**4,931**	**25,065**	**509,646**

2023թ. և 2022թ. ընթացքում Խումբը չի հայտնաբերել իր հիմնական միջոցների արժեզրկում: 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի գրավադրված հիմնական միջոցներ:

2023 թվականի համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 94,450 հազար դրամ համախառն հաշվեկշռային արժեքով 2,738 անուն (31.12.2022թ.՝ 91,872 հազար դրամ համախառն հաշվեկշռային արժեքով 2,591 անուն) հիմնական միջոցներ հաշվառված են զրոյական արժեքով:

7. Ներդրումային գույք

Ներդրումային գույքը ք. Երևան, Հանրապետության 49, թիվ 9 հասցեում գտնվող 101 քմ. մակերեսով անշարժ գույքն է, որը վերջին տարիներին տրվել է գործառնական վարձակալությամբ երրորդ կողմի: Անշարժ գույքի հետագա օգտագործման նպատակն անորոշ է:

Իրական արժեքով հաշվառվող խմբի ներդրումային գույքի արժեքը գնահատվել է անկախ մասնագիտացված գնահատողի՝ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի կողմից (2022թ.՝ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի կողմից): Գնահատողի կողմից գույքի իրական արժեքը որոշվել է գնահատման համեմատական և եկամտաբերության մեթոդների համադրմամբ: Քանի որ գույքի իրական արժեքը գնահատվել է՝ հիմք ընդունելով ոչ դիտելի ելակետային տվյալները, հետևաբար իրական արժեքի չափումը համապատասխանում է իրական արժեքի չափման հիերարխիայի 3-րդ մակարդակին: Իրական արժեքի փոփոխություններից առաջացած զուտ օգուտը (կորուստը) ճանաչվել է շահույթում կամ վնասում:

Տարվա ընթացքում մակարդակների միջև տեղափոխություններ տեղի չեն ունեցել:

Ներդրումային գույքի իրական արժեքը որոշելիս օգտագործվել են հետևյալ ոչ դիտելի ելակետային տվյալները.

31.12.2023թ.-ի դրությամբ՝

Գնահատման մեթոդը	Ոչ դիտելի ելակետային տվյալները	Ոչ դիտելի ելակետային տվյալների սահմանաչափը	31.12.2023թ. գնահատված արժեքը, հազար դրամ	Իրական արժեքի որոշման մեջ տեսակարար կշիռ
Համեմատական (շուկայական)	Շուկայական գներ 1 քմ. համար	1,164-1,755 հազար դրամ	125,654	50%
Եկամտաբերության	Շուկայական ամսական վարձավճար 1 քմ. համար	9.35 հազար դրամ	124,753	50%
	Պարապուրդի գործակից	0,88		
	Գործառնական ծախսերի գործակից՝ պարապուրդի գործակցով ճշտելուց հետո	0,813		
	Կապիտալավերածման գործակից	0,065		

31.12.2022թ.-ի դրությամբ՝

Գնահատման մեթոդը	Ոչ դիտելի ելակետային տվյալները	Ոչ դիտելի ելակետային տվյալների սահմանաչափը	31.12.2022թ. գնահատված արժեքը, հազար դրամ	Իրական արժեքի որոշման մեջ տեսակարար կշիռ
Համեմատական (շուկայական)	Շուկայական գներ 1 քմ. համար	1,500-1,930 հազար դրամ	132,655	60%
Եկամտաբերության	Շուկայական ամսական վարձավճար 1 քմ. համար	7,75 հազար դրամ	109,640	40%
	Պարապուրդի գործակից	0,92		

էջ 26՝ 33-ից

	Գործառնական ծախսերի գործակից՝ պարապուրդի գործակցով ճշտելուց հետո	0,825		
	Կապիտալավերածման գործակից	0,065		

2023թ. ընթացքում ներդրումային գույքից ստացված վարձակալական եկամուտը կազմել է 4,000 հազար դրամ (2022թ.՝ 4,000 հազար): Հաշվետու ժամանակաշրջանում ներդրումային գույքի վրա էական ուղղակի գործառնական ծախսեր չեն կատարվել:

8. Պաշարներ

31 դեկտեմբերի 2023թ. դրությամբ (31 դեկտեմբերի 2022թ.՝ նույնպես) պաշարներն առավելապես ներառում են գրենական պիտույքներ և վառելիք: Հաշվետու տարվա ընթացքում որպես ծախս ճանաչված պաշարները կազմել են 50,282 հազար դրամ (2022թ.՝ 73,946 հազար դրամ): Հաշվետու տարվա ընթացքում պաշարների արժեքի նվազում տեղի չի ունեցել:

Պաշարների սեփականության իրավունքի սահմանափակումներ չկան:

9. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	Առ 31.12.2023թ.	Առ 31.12.2022թ.
Մասնակցության վճարների գծով	211	949
Վարձակալության գծով	9,095	9,085
Հանած՝ վարձակալության գծով դեբիտորական պարտքի արժեզրկման պահուստ	(8,755)	(6,688)
Տրված կանխավճարներ	417	97
Այլ դեբիտորական պարտքեր	332	-
Ընդամենը	**1,300**	**3,443**

Խումբը վարձակալության գծով ունի նախորդ տարիներից ժամկետանց դեբիտորական պարտքեր, որոնց գծով հաշվետու տարեվերջին ճանաչել է 100% (նախորդ տարի՝ 50%-100%) արժեզրկում՝ պահուստի միջոցով: Դեբիտորական պարտքերի հետ կապված պարտքային և արժութային ռիսկերին Խմբի ենթարկվածությունը բացահայտված է Ծանոթ. 20-ում: Դեբիտորական պարտքի գծով ակնկալվող պարտքային կորուստները չեն ճանաչվել՝ աննշան համարվելու պատճառով:

Վարձակալության գծով դեբիտորական պարտքի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններ

Հազար դրամ	Առ 31.12.2023թ.	Առ 31.12.2022թ.
Մնացորդն առ 1 հունվարի	**6,688**	**3,809**
Պահուստի օգտագործում	-	-
Արժեզրկման գծով պահուստի ավելացում	2,067	2,879
Մնացորդն առ 31 դեկտեմբերի	**8,755**	**6,688**

10. Դրամական միջոցներ և ոչ դրամային գործարքներ

10.1. Դրամական միջոցներ

Հազար դրամ	Առ 31.12.2023թ.	Առ 31.12.2022թ.
Բանկային հաշիվներ՝ ՀՀ դրամով	18,739	6,009
Բանկային հաշիվներ՝ ԱՄՆ դոլարով	510	1,574
Այլ դրամական միջոցներ	6	6
Ընդամենը	**19,255**	**7,589**

Դրամական միջոցների հետ կապված պարտքային և արժութային ռիսկերին Խմբի ենթարկվածությունը բացահայտված է Ծանոթագրություն 20-ում: Դրամական միջոցների գծով ակնկալվող

պարտքային կորուստները չեն ճանաչվել՝ աննշան համարվելու պատճառով: Նշված ամսաթվերի դրությամբ դրամական միջոցների օգտագործման որևէ էական սահմանափակում չկա:

10.2. Ֆինանսական պարտավորությունների շարժի և ֆինանսավորման գործունեությունից հոսքերի համադրում

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Սկզբնական մնացորդ առ 01 հունվարի	**123,449**	**78,560**
Փոխառությունների ստացում	9,200	2,500
Փոխառությունների մարում դրամական վճարումով	(6,000)	(2,500)
Փոխառությունների վերաչափում (տես ծանոթ. 12)	1,751	44,889
Վերջնական մնացորդ առ 01 դեկտեմբերի	**128,400**	**123,449**

11. Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Մնացորդը հունվարի 1-ին	**476,774**	**492,805**
Շնորհների ստացում	-	-
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամտի ճանաչում	(15,149)	(16,031)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**461,625**	**476,774**

Ակտիվներին վերաբերող շնորհները ներառում են ՀՀ կառավարությունից անհատույց՝ որպես նվիրաբերություն ստացված շենքը և այլ շնորհատուներից ստացված այլ հիմնական միջոցներ: Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվներին վերաբերող շնորհներին կից չկատարված պայմաններ կամ հանձնառություններ չկան:

12. Կապակցված կողմերից ստացված փոխառություններ

Սույն հոդվածում ներկայացված գումարները Խմբի տնօրենից ստացված անտոկոս փոխառություններն են, որոնց մի մասը՝ 3,200 հազար ՀՀ դրամի չափով, տրամադրվել է հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի ընթացիկ ծախսերը հոգալու նպատակով և ենթակա է վերադարձման մեկ տարի ժամկետում: Իսկ փոխառության մնացորդի մյուս մասն իրենից ներկայացնում է ք. Երևան, Հանրապետության 49, թիվ 9 հասցեում գտնվող անշարժ գույքի ձեռքբերման նպատակով ստացված փոխառությունը, և որի վերադարձման գումարը կորոշվի՝ կախված վերադարձման օրվա դրությամբ այդ գույքի շուկայական արժեքից: Փոխառությունը ենթակա է մարման՝ ըստ փոխատուի առաջին իսկ պահանջի: Քանի որ գույքի իրական արժեքը հաշվետու տարվա ընթացքում աճել է (տե՛ս Ծանոթ. 7), ուստի փոխառության հաշվեկշռային արժեքը նույնչափ ավելացել է: Այսինքն, այս փոխառության գծով ֆինանսական պարտավորությունը վերաչափվում է իրական արժեքով: Իրական արժեքով վերաչափումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

13. Եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Մնացորդը հունվարի 1-ին	-	-
Շնորհների ստացում	159,049	158,439
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամտի ճանաչում	(132,541)	(132,032)
Եկամուտ ճանաչված շնորհից հաշվեգրված ԱԱՀ	(26,508)	(26,407)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	-	-

Բոլոր շնորհները ստացվել են առավելապես ՀՀ կառավարությունից, ինչպես նաև հայաստանյան այլ աղբյուրներից, որոնք ուղղված են Խմբի կանոնադրական գործունեության ֆինանսավորմանը: Հաշվետու և նախորդ տարիների շնորհը իրենից ներկայացնում է ԿԳՄՍ նախարարությունից ստացված

դրամաշնորհը, որի նպատակն է շախմատի ակադեմիայի սաների համար ամենօրյա անվճար ուսուցման, գրոսմայստերների և վարպետների ուսումնամարզական հավաքների և մրցաշարերի կազմակերպման ծախսերի ֆինանսավորումը: Ստացված շնորհներին կից դեռ չկատարված կամ կատարման ենթակա պայմաններ չկան:

14. Ընթացիկ պահուստներ

Այս հոդվածում ներկայացված են աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները՝ տարեկան արձակուրդների տեսքով փոխհատուցելի բացակայությունների գծով: Պահուստավորումը կատարվում է յուրաքանչյուր տարեվերջի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդի համեմատությամբ աճի կամ նվազման գումարով՝ ճշտելով անձնակազմի գծով ծախսումները: Ակնկալվում է, որ դրամական արտահոսքերը տեղի կունենան հաջորդ տարվա ընթացքում՝ հերթական ամենամյա արձակուրդներն օգտագործելիս: Հեղման ազդեցությունը համարվել է ոչ էական, և պահուստը չափվել է գնահատված դրամական արտահոսքերի անվանական գումարով:

15. Հասույթ և մնացորդներ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Դասագրքերի պատրաստումից և տրամադրումից	76,889	94,524
Մրցաշարերին մասնակցության վճարներից	16,322	17,432
Վարձակալությունից	6,333	5,167
Դասընթացների մասնակցության վճար	2,154	-
Ուսուցիչների վերապատրաստման ծառայություն	1,316	1,688
Այլ	880	121
Ընդամենը	**103,894**	**118,932**

Պայմանագրերի գծով մնացորդներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն գնորդների հետ պայմանագրերի գծով ստացվելիք գումարների և պայմանագրային պարտավորությունների վերաբերյալ:

Հազար դրամ	Ծանոթ.	Առ 31.12.2023թ.	Առ 31.12.2022թ.
Առևտրական դեբիտորական պարտքերում ներառված ստացվելիք գումարներ	9	551	949
Գնորդների հետ պայմանագրերի գծով ակտիվ՝ դեբիտորական պարտքերում չներառված			
Պայմանագրային պարտավորություններ		-	60

Կատարման ենթակա պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն

Հասույթը չափվում է գնորդների հետ պայմանագրերում նշված հատուցումների հիման վրա: Խումբը ճանաչում է հասույթը, երբ գնորդին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը: Գնորդների հետ պայմանագրերի ներքո կատարման ենթակա պարտականությունները և հասույթի ճանաչման քաղաքականությունը նկարագրված է ծանոթագրություն 3.4-ում:

16. Նվիրաբերություններից եկամուտ

Այս հոդվածում ներառված են հիմնականում «Չեսս Մուդ Օփեն» միջազգային մրցաշարի մրցանակային ֆոնդի ձևավորման նպատակով ՀՀ տարբեր իրավաբանական անձանցից և հենց Chess Mood Inc.-ից ստացված գումարները:

17. Մրցաշարերի կազմակերպման ծախսեր

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Մրցանակային ֆոնդ	17,045	20,233

Հյուրանոցային և ներկայացուցչական ծախսեր	5,779	6,568
Աշխատանքների ձեռքբերում	4,913	6,222
Տպագրական ծախսեր	1,582	1,941
Նյութեր	929	2,462
Այլ	469	813
Ընդամենը	**30,717**	**38,239**

18. Նվիրաբերության գծով ծախսեր

Այս հոդվածում ներառված գումարներն առավելապես վերաբերում են ՀՀ մարզպետարանների և Երևան քաղաքի վարչական շրջանների ենթակայությամբ գործող շախմատի մարզադպրոցներին ու հանրակրթական դպրոցներին անհատույց տրամադրված գույքին:

19. Կապակցված կողմերի հետ գործարքներ

19.1. Վերահսկողության փոխհարաբերություն

Խումբը որևէ կազմակերպության կողմից չի վերահսկվում: Հիմնադրամի ղեկավարման բարձրագույն մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որի կազմը ներկայացված է Ծանոթ. 1-ում:

19.2. Ղեկավարության հատուցումները

Խմբի առանցքային անձնակազմի գծով հատուցումները հետևյալն են.

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Աշխատավարձ և պարգևավճար	8,264	7,185

19.3. Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Հազար դրամ	Գործարքի գումար 2023թ.	Գործարքի գումար 2022թ.	Չմարված մնացորդ 31.12.2023թ.	Չմարված մնացորդ 31.12.2022թ.
Հիմնադրամի տնօրենի հետ՝				
Փոխառության ներգրավում (Ծանոթ. 12)	9,200	2,500	128,400	123,449
Փոխառության մարում (Ծանոթ. 12)	(6,000)	(2,500)	-	-
Այլ կապակցված կողմերի հետ՝				
Ծառայությունների ստացում	-	-	-	-
Վարձակալության տրամադրում	500	500	-	-
Նվիրաբերությունից եկամուտ	-	-	-	-

20. Ֆինանսական ռիսկերի կառավարման ուղղությունները

20.1. Ընդհանուր ակնարկ

Խումբը ենթարկված է ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող հետևյալ ռիսկերին՝

- պարտքային ռիսկ
- իրացվելիության ռիսկ
- շուկայական ռիսկ

Սույն ծանոթագրությունում ներկայացվում է տեղեկատվություն՝ վերոնշյալ ռիսկերից յուրաքանչյուրին Խմբի ենթարկվածության մասին, այդ ռիսկերը չափելու և կառավարելու, ինչպես նաև կապիտալի կառավարման գծով Խմբի նպատակներն ու քաղաքականությունը: Հավելյալ թվային բացահայտումները ներառված են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների տարբեր հատվածներում:

Խմբի ռիսկերի կառավարման ռազմավարության և ընթացակարգերի սահմանման ու վերահսկման ընդհանուր պատասխանատվությունը կրում է ղեկավարությունը:

Խումբը վերապատրաստումների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով ձգտում է ստեղծել կարգապահական և կառուցողական վերահսկողական միջավայր, որում բոլոր աշխատակիցները կհասկանան իրենց դերն ու պարտականությունները:

20.2. Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը վերաբերում է այն ռիսկին, որ կողմը՝ իր պայմանագրով սահմանված պարտակա-նությունների չկատարմամբ Խմբի համար կառաջացնի ֆինանսական կորուստ:

Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ եղել է.

	Հաշվեկշռային արժեք	
	31.12.2023թ.	**31.12.2022թ.**
Դեբիտորական պարտքեր (Ծանոթ. 9)	551	3,346
Դրամական միջոցներ (Ծանոթ. 10)	19,251	7,585
Ընդամենը	**19,802**	**10,931**

20.3. Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը դժվարություններ կունենա այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության կառավարման հետ կապված Խմբի մոտեցումն է՝ որքան հնարավոր է ունենալ բավարար իրացվելի միջոցներ իր ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու համար՝ ինչպես նորմալ, այնպես էլ լարված պայմաններում՝ առանց իր համբավը ռիսկի ենթարկելու և առանց անընդունելի վնասներ կրելու:

Խումբը կառավարում է իրացվելիության ռիսկը՝ շարունակաբար մոնիթորինգի ենթարկելով կանխատեսված և փաստացի դրամական հոսքերը, ինչպես նաև ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետներն իրար համապատասխանեցնելով:

20.4. Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայական գների փոփոխությունները, ինչպիսիք են արտարժույթի փոխարժեքները, տոկոսադրույքները, կազդեն Խմբի շահույթի կամ վնասի և ֆինանսական գործիքների արժեքների վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է շուկայական ռիսկին ենթարկվածությունը պահպանել ընդունելի սահմաններում՝ միաժամանակ օպտիմալացնելով հատույցը:

ա) Արժութային ռիսկ

Խումբն իրականացնում է արտարժույթով արտահայտված գործարքներ, հետևաբար առաջացնում է արտարժույթի փոխարժեքի տատանումներին ենթարկվածություններ: Արտարժութային ռիսկին ենթարկվածությունները Խումբը չի կառավարում:

Խմբի արտարժույթով արտահայտված դրամային ակտիվների և դրամային պարտավորությունների հաշվեկշռային արժեքները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն են՝ արտահայտված համապատասխան արժույթներով.

Հազար դրամ	31.12.2023թ.		31.12.2022թ.	
Ֆինանսական ակտիվ (պարտավորություն)	EUR	USD	EUR	USD
Դրամական միջոցներ	1	510	1	1,574
Արտարժութային զուտ ենթարկվածություն	**1**	**510**	**1**	**1,574**

Հաշվետու ամսաթվի դրությամբ և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում միջին փոխարժեքները՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակած միջին փոխարժեքները, ներկայացված են ստորև.

	Միջին փոխարժեքներ		Հաշվետու ամսաթվի փոխարժեք	
Դրամով	2023թ.	2022թ.	31.12.2023թ.	31.12.2022թ.
1 ԱՄՆ Դոլար	392.47	434.86	404.79	393.57
1 Եվրո	424.59	459.48	447.9	420.06

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է շահույթ հարկումից հետո ցուցանիշի զգայունությունը հաշվետու ամսաթվի դրությամբ գործող արտարժույթի փոխարժեքների ուժեղացման դեպքում: Արտարժութային փոխարժեքների թուլացումը կհանգեցնի հակառակ էֆեկտի:

Հազար դրամ	31.12.2023թ.		31.12.2022թ.	
	Ազդեցությունը		Ազդեցությունը	
	Շահույթի վրա	Սեփական կապիտալի վրա	Շահույթի վրա	Սեփական կապիտալի
USD ուժեղացում 10%-ով	51	51	157	157
EUR ուժեղացում 10%-ով	0.1	0.1	0.1	0.1

բ) Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդում են ուղղակիորեն փոխառությունների և փոխատվությունների վրա՝ փոփոխելով դրանց իրական արժեքը (ֆիքսված տոկոսադրույքով գործիք) կամ դրանց ապագա դրամական հոսքերը (փոփոխական տոկոսադրույքով գործիք): Ղեկավարությունը չունի ֆորմալ քաղաքականություն՝ որոշելու, թե Խումբն ինչքանով պետք է ենթարկված լինի փոփոխական և ինչքանով ֆիքսված դրույքներին: Այնուամենայնիվ, նոր փոխառությունների ձեռքբերման կամ տրամադրման դեպքում ղեկավարությունն օգտագործում է իր դատողությունը, որպեսզի որոշի, թե մինչև մարումն ընկած ակնկալվող ժամկետում Խմբի համար որը կլինի առավել նպաստավոր՝ փոփոխական, թե ֆիքսված տոկոսադրույքը:

21. Վարձակալություն

Խումբը հանդես է գալիս որպես վարձատու՝ վարձակալությամբ տրամադրելով սեփականության իրավունքով իրեն պատկանող ք. Երևան, Հանրապետության 49, թիվ 9 հասցեում գտնվող որպես ներդրումային գույք հաշվառված գրասենյակային տարածքը և ք. Երևան, Շևչենկո 34 հասցեում գտնվող 3,346 քմ. ընդհանուր մակերեսով որպես հիմնական միջոց հաշվառված շենքի մի մասը՝ 189.3 քմ. ընդհանուր մակերեսով: Խումբը 31 դեկտեմբերի 2023թ. դրությամբ չունի չեղյալ չհայտարարվող վարձակալության պայմանագրեր: Հաշվետու տարվա ընթացքում որպես եկամուտ ճանաչված վարձավճարները կազմել են 6,333 հազար դրամ (2022թ.՝ 5,167 հազար դրամ): Պայմանական վարձավճարներ չկան:

22. Իրական արժեքի գնահատում

Իրական արժեքների գնահատման նպատակն է ստանալ մոտավոր այն գումարը, որը կստացվի շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվի վաճառքից կամ կվճարվի պարտավորությունների փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ: 31 դեկտեմբերի 2023թ. դրությամբ Խմբի

ներդրումային գույքը չափվել է իրական արժեքով: Իրական արժեքի հիերարխիայի մակարդակը բացահայտված է Ծանոթ. 3.3-ում և Ծանոթ. 7-ում:

Ղեկավարության կարծիքով, համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները մոտավորապես հավասար են իրենց իրական արժեքներին:

23. Պայմանական դեպքեր

23.1. Ապահովագրություն

Ապահովագրությունը ՀՀ-ում համեմատաբար նոր է և դեռ զարգացման փուլում է գտնվում, և ապահովագրության շատ ձևեր դեռ հասանելի չեն: Խումբն ամբողջովին ապահովագրված չէ իր գործունեության ընդհատման կամ էական կրճատման համար, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված հնարավոր միջադեպերի արդյունքում գույքային, բնապահպանական կամ առողջական վնասների հետ: Քանի դեռ Խումբը համապատասխան ապահովագրական պաշտպանություն ձեռք չի բերել, առկա է ռիսկ, որ որոշ ակտիվների վնասումը կամ պարտավորությունների առաջացումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

23.2. Հարկային անորոշություններ

Հարկային համակարգը ՀՀ-ում աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ տարընթերցումների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Խմբի հարկային հաշվարկներն ու հայտարարագրերը և իրավունք ունեն տույժ-տուգանքներ նշանակելու:

Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Խմբի ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանության վրա:

23.3. Դատական գործեր

2023թ. դեկտեմբերին Հիմնադրամը գումարի բռնագանձման պահանջով հայցադիմում է ներկայացրել ընդդեմ Ընկերության դեբիտորներից մեկի, որի առևտրական դեբիտորական պարտավորության գծով ճանաչվել էր 100% արժեզրկում:

23.4. Երաշխավորություններ

31 դեկտեմբերի 2023թ. դրությամբ Խումբը տրամադրած կամ ստացված երաշխավորություններ չի ունեցել:

Տնօրեն
Սմբատ Լպուտյան

Գլխավոր հաշվապահ
Արմինե Սարգսյան

07 հունիսի 2024թ.

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՆՍՊՇԱ -47 -2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «13» փետրվար 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամը)՝ ի դեմս տնօրեն Սմբատ Լպուտյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) «1041. Մեծ նվաճումների սպորտ» ծրագրի «11007. Շախմատիստների պատրաստման ծառայություններ» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Հիմնադրամին հատկացնել սույն պայմանագրով սահմանված գումարը, իսկ Հիմնադրամը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված գումարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում կատարել սույն պայմանագրի 2.4-րդ կետով և իր կանոնադրությամբ նախատեսված «Շախմատիստների պատրաստման ծառայություններ» (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. միջոցառումների կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների՝ Հավելված N 1,

1.1.2. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի՝ Հավելված N 2

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու Հիմնադրամի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. Հիմնադրամից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Հիմնադրամից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.4-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ պայմանագրի 6.5-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի Հիմնադրամը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Հիմնադրամը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. Հիմնադրամի կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. Հիմնադրամի կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը, կամ նշված գումարի չափով պակասեցնելու հետագա տարիների ֆինանսավորումը, կամ հետագա տարիների պայմանագրերով պարտավորեցնել լրացնելու ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարումը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները,

2.1.8. սույն պայմանագրի 2.4-րդ կետով նախատեսված պարտավորությունները վերանայել (փոփոխություն կատարել) նախորդ տարվա հաշվետվությունների արդյունքների հիման վրա:

2.2. Հիմնադրամն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և Հիմնադրամի կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել Հիմնադրամի գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ ծրագրով նախատեսված դեպքերում իր և Հիմնադրամի կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել Հիմնադրամին, այդ թվում՝ Հիմնադրամին ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան Հիմնադրամի կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման՝ դրա համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե իրականացված միջոցառումների ներկայացված հաշվետվությունները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Հիմնադրամը պարտավոր է՝

2.4.1. ապահովել Հիմնադրամի գործունեությունը Հիմնադրամի կանոնադրական նպատակներին և խնդիրներին համապատասխան,

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները՝ Ակադեմիայում անվճար ուսանող սաներ, Բարձրակարգ շախմատիստների պատրաստում, Միջազգային մրցաշարերի կազմակերպում, Մարզիչների սեմինարների կազմակերպում, Ուսումնամարզական հավաքների կազմակերպում, Միջազգային մրցաշարերում Ակադեմիայի սաների հաղթանակների և զբաղեցրած մրցանակային տեղերի ընդհանուր թիվ ,

2.4.5. մինչև 2023 թվականի մայիսի 1-ը ներկայացնել Հիմնադրամի զարգացման լրամշակված ծրագիրը,

2.4.6. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառման իրականացման մասին բովանդակային և ամփոփ ֆինանսական հաշվետվություններ՝ համաձայն,

2.4.7. պետական մարմնի առաջարկությամբ մասնակցել պետական մարմնի կողմից իրականացվող կամ հովանավորվող սպորտային միջոցառումներին

2.4.8. պետական մարմնի պահանջով, ըստ անհրաժեշտության, ներկայացնել գովազդատեղեկատվական նյութերի նախագծերը, նոր ծրագր(եր)ի վերաբերյալ ոլորտի մասնագետների եզրակացությունները

2.4.9. սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման դեպքում հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում պետական մարմնի պահանջով տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպությունների կամ մեկենասի ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.10. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.11. ապահովել Հիմնադրամ հրապարակային հարթակների (պաշտոնական կայքէջ, Facebook, Instagram և այլն) գործարկումը կանոնադրական նպատակներին և խնդիրներին համապատասխան,

2.4.12. իրականացնել անհրաժեշտ գովազդատեղեկատվական միջոցառումներ սպորտային արդյունքը հանրության լայն շրջանակներին հասանելի դարձնելու նպատակով: Եռամսյակային հաշվետվությամբ պետական մարմնին ներկայացնել հրապարակային հարթակների (պաշտոնական կայքէջ, Facebook, Instagram, Youtube և այլն) հետևորդների քանակը, ինչպես նաև յուրաքանչյուր միջոցառման գովազդային նյութերի շահառուների ցուցանիշները (*like, share),*

2.4.13. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.14. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.15. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.16. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին, ինչպես նաև ներկայացնել սույն պայմանագրի կատարմանը վերաբերող ֆինանսական և բովանդակային հաշվետվությունները: Հիմնադրամը պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար: Բովանդակային հաշվետվության հետ ներկայացնել իրականացված միջոցառումների մասին համապատասխան նյութեր (լուսանկարներ, լոգոտիպ կամ այլ գրաֆիկական պատկեր կամ ազդագրեր), հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով:

2.4.17. պետական մարմնին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամաններով սահմանված ձևաչափերի, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով,

2.4.18. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.19. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.20. ավարտված միջոցառումների փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Հիմնադրամում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար,

2.4.21. սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պետական մարմնի հաստատմանը ներկայացնել Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը՝ համապատասխան հիմնավորումներով: Նախահաշվի յուրաքանչյուր ծախսային ուղղության մեջ կատարվող փոփոխությունը նախապես, մինչև փաստացի ծախսերի կատարումը, համաձայնեցնել պետական մարմնի հետ: Նախահաշվում փոփոխությունների ներկայացման առաջարկի վերջնաժամկետն է 2023 թվականի դեկտեմբերի 15-ը:

2.4.22. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան 2023 թվականի դեկտեմբերի 22-ը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը Հիմնադրամին է տրամադրում 159049,8 (հարյուր հիսունինը միլիոն քառասունինը հազար ութ հարյուր) հազար դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 1-ի: Այդ գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով,

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարը պետական մարմինը Հիմնադրամին է տրամադրում սույն պայմանագրի Հավելված N 2-ով սահմանված ժամկետներում, Հիմնադրամի՝ սույն պայմանագրում նշված հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով,

3.3. Հիմնադրամի կողմից միջոցառումների կատարման՝ սույն պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում պետական մարմինն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը,

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ սույն պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու կամ կանխատեսվող եկամուտներից զրկելու համար կողմերից յուրաքանչյուրը կրում է պատասխանատվություն մյուս կողմին պատճառած վնասների և բաց թողնված օգուտների լրիվ ծավալով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների և բաց թողնված (չստացված) եկամուտների լրիվ չափով փոխհատուցում:

5.3. Սույն պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելը աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում մյուս կողմն իրավունք ունի կամ ստանալ սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել սույն պայմանագրի հարկադիր կատարումը:

5.4. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները Հիմնադրամի կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում՝ ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը Հիմնադրամին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

5.5. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Հիմնադրամը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

5.6. Սույն պայմանագրով Հիմնադրամի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Հիմնադրամը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև Հիմնադրամի էլեկտրոնային փոստին:

5.7. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում Հիմնադրամի անվանումը, գտնվելու վայրը, Հիմնադրամի կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

5.8. Հիմնադրամը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

6. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

6.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

6.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

6.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Հիմնադրամին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

6.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

6.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Հիմնադրամից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից,

8.2. Սույն պայմանագիրը կնքվում է սույն պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ,

8.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
որտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ı/h՝ 900011032498
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

_____ Վ.Գասպարյան

ı.Տ.

ՀԻՄՆԱԴՐԱՄ
«Հայաստանի շախմատի ակադեմիա»
հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Շևչենկո 34
ՀՎՀՀ՝ 02560522
«Ամերիա Բանկ» ՓԲԸ
h/h 1570018417800100
Տնօրեն՝

_____ Ս. Լպուտյան

Կ.Տ.

Հավելված N1
2023թ. փետրվարի 13 -ին
կնքված ՈՍՊՇԱ 47 պայմանագրի

2023 թվականին «Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամի կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները

Ցուցանիշներ	Միավոր	Քանակ
Ակադեմիայում անվճար ուսանող սաներ	մարդ	935
իգական սեռի	մարդ	200
արական սեռի	մարդ	735
Բարձրակարգ շախմատիստների պատրաստում	մարդ	1
Միջազգային մրցաշարերի կազմակերպում	հատ	3
Միջազգային մրցաշարերում Ակադեմիայի սաների հաղթանակների և զբաղեցրած մրցանակային տեղերի ընդհանուր թիվ	հատ	8
իգական սեռի կողմից	հատ	2
արական սեռի կողմից	հատ	6
Մարզիչների սեմինարների կազմակերպում	հատ	*1*
Ուսումնամարզական հավաքների կազմակերպում	հատ	1
5. Եկամուտներ, այդ թվում՝	հազար դրամ	159049,8

5.1 Տրամադրվող դրամաշնորհի գումարը	հազար դրամ	159049,8
6. Այլ եկամուտներ (կանխատեսում)	հազար դրամ	0
7. Ծախսեր	հազար դրամ	159049,8

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02698732
հ/հ՝ 900011032498
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

_____ Վ. Գասպարյան

Կ.Տ.

ՀԻՄՆԱԴՐԱՄ

«Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Շևչենկո 34
ՀՎՀՀ՝ 02560522
«Ամերիա Բանկ» ՓԲԸ
հ/հ 1570018417800100

Տնօրեն՝

_____ Ս. Լպուտյան

Կ.Տ.

Հավելված N2
2023թ. դեկտեմբերի 13-ին
կնքված ՍՍՊՇԱ 47 պայմանագրի

Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

«Հայաստանի շախմատի ակադեմիա» Հիմնադրամի 2023թ. ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման չափի վճարման ժամանակացույց(աճողական)

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Ընդամենը տարեկան (հազար դրամ)	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից (հազար դրամ), ընդ որում՝											
		1 եռամսյակ			6 ամիս			9 ամիս			տարի		
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	2	3	8	5	6	7	8	9	10	11	12	13	14
Ծրագիր	159049,8	0	15611.8	31223.5	44252.4	57281.3	70310.3	83700.8	97091.3	110481.8	126671.1	142860.4	159049,8
Ընդամենը	159049,8	0	15611.8	31223.5	44252.4	57281.3	70310.3	83700.8	97091.3	110481.8	126671.1	142860.4	159049,8

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գանձարանական վարչություն
ՀՎՀՀ՝ 02698732
հ/հ՝ 900011032498
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

_____ Վ.Գասպարյան

Մ.Տ.

ՀԻՄՆԱԴՐԱՄ

«Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Շևչենկո 34
ՀՎՀՀ՝ 02560522
«Ամերիա Բանկ» ՓԲԸ
հ/հ 1570018417800100

Տնօրեն՝

_____ Ս. Լպուտյան

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ-ՀՀԿԳՄՆԴՄ-11016/5

ք. Երևան «25»«օգոստոս» 2023թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամը, ի դեմս տնօրեն Ս. Լպուտյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի օգոստոսի 3-ի ««Հանրակրթության պետական չափորոշչի» ներդրմամբ պայմանավորված 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարանների հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի որոշումը հաստատելու մասին» թիվ 1343-Ա/2 և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի օգոստոսի 9-ի ««Հանրակրթության պետական չափորոշչի» ներդրմամբ պայմանավորված 10-րդ դասարանի հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի որոշումը հաստատելու մասին» թիվ 1424-Ա/2 հրամանների դրույթները՝ «1146. Հանրակրթական ծրագիր» ծրագրի «11016. Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում» միջոցառման շրջանակներում կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. **Պայմանագրի առարկան և գինը**

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է կազմակերպությանը տրամադրել 6300000 (Վեց միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը փորձաքննություն անցած և դրա արդյունքում հաղթող ճանաչված հետևյալ դասագրքերի ստեղծման համար.

N/N	Դասագրքի անվանումը	Գումարը՝ հազ. դրամ
2-րդ դասարանի դասագիրք		
1	Շախմատի դասագիրք և վարժությունների տետր	6300,0
	Ընդամենը գումարը	**6300,0**

1.2. Սույն պայմանագրով նախատեսված գումարի դիմաց կազմակերպությունը պետական մարմնին սույնով տրամադրում է նաև դասագրքի, դասագրքի մեթոդական ուղեցույցների, դասագրքի բովանդակությունը լրացնող կամ հարստացնող այլ ուսումնական

(ուսումնաօժանդակ) նյութերի (բոլորը միասին՝ Դասագիրք) ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև Հեղինակային և հարակից իրավունքների մասին օրենքով նախատեսված օգտագործման (մասնավորապես՝ տպագիր օրինակ(ներ)ի վերարտադրման, տարածման, վարձույթով տալու և փոխատվության) իրավունք՝ անժամկետ, ՀՀ տարածքում (այսուհետ՝ Լիցենզիա):

2. Կազմակերպության իրավունքները և պարտավորությունները

2.1. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.1.1. Փորձաքննությունը անցնելու և հաղթող ճանաչվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.1.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.1.3. իր միջոցներով տպագրել և վաճառել Դասագիրքը:

2.2. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.2.1. Պետական մարմնին տրամադրել Դասագրքի համահեղինակների և դրա նկատմամբ մտավոր սեփականության իրավունք ունեցող որևէ այլ անձի մասին տեղեկատվություն, ինչպես նաև նրանց իրավունքները հավաստող և նրանց հետ կնքված պայմանագրերի, համաձայնագրերի օրինակները:

2.2.2. Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ սահմանված ժամկետում, վերացնել բովանդակային գնահատում իրականացնող հանձնաժողովի անդամների կողմից նշված վրիպակները և այն դիտարկումները (բայց ոչ ավելի քան դասագրքի ծավալի 10%-ը), որոնք ընդունելի են Պատվիրատուի կողմից:

3. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

3.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.armeps.am հասցեով գործող կայքի օգնություն բաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 2):

3.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 3.1-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

3.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 3.2-րդ կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2-րդ կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 3.1-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ հանձնման-ընդունման ակտը ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1-ին կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2-րդ և 5.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 3.1-ին կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում << Ֆինանսների նախարարի 2021 թվականի օգոստոսի 10-ի N 422-Ա հրամանի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը

միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.2 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.3 կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

8.4. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.5. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.6. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

8.7. Սույն պայմանագիրը հանդիսանում է նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կողմերի միջև հեղինակային իրավահարաբերությունները կարգավորող հեղինակային պայմանագիր և մտավոր սեփականության այլ իրավունքների հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող լիցենզային պայմանագիր:

8.8. Կողմերը սույնով համաձայնվում են, որ Դասագրքի հետագա վերամշակում, վերադաշնակում, նկարազարդում, հարմարեցում և որևէ այլ ձևով վերափոխում կարող է կատարվել բացառապես կողմերի համաձայնությամբ՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու կամ սույն Պայմանագրում փոփոխություն կատարելու միջոցով:

8.9. Կողմերը հավաստիացնում և երաշխավորում են, որ ունեն համապատասխան բոլոր իրավունքները, համաձայնությունները և թույլտվությունները ստորագրելու սույն պայմանագիրը և ստանձնելու դրանով նախատեսված պարտավորությունները:

8.10. Կազմակերպությունը սույնով հավաստիացնում և երաշխավորում է, որ.

8.10.1. Դասագիրքը չի խախտում որևէ անձի հեղինակային կամ մտավոր սեփականության որևէ այլ իրավունք,

8.10.2. սույն պայմանագրի ստորագրումը չի հանգեցնի Դասագրքի որևէ համահեղինակի (եթե առկա է) իրավունքի խախտման,

8.10.3 ձեռք են բերվել բոլոր այլ հեղինակների, համահեղինակների և իրավատերերի (եթե առկա են) գրավոր համաձայնություններն ու թույլտվությունները սույն պայմանագիրը ստորագրելու համար,

8.10.4 որևէ անձի կողմից պետական մարմնի դեմ հեղինակային իրավունքների կամ որևէ այլ մտավոր սեփականության իրավունքի խախտման վերաբերյալ պահանջ, բողոք կամ հայցադիմում ներկայացնելու դեպքում կազմակերպությունը ներգրավվելու է տվյալ վեճում (այդ թվում որպես պատասխանող՝ դատական հայցի դեպքում), պաշտպանելու է պետական մարմնին և հատուցելու է պետական մարմնին հասցված որևէ վնաս (եթե առաջանա):

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամ
ք.Երևան,Կառավարական 2 շենք	ք. Երևան, Շնչենկո 34
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011005130	Հ/Հ 1570018417800100
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 02560522
Նախարարության գլխավոր քարտուղար	Տնօրեն
_____ Հ. Հակոբյան	_____ Ս. Ալբուտյան
Կ.Տ. /ստորագրություն/	Կ.Տ. /ստորագրություն/

Հավելված2
«25»«օգոստոս» 2023թ.ին
կնքված N ՀՀԿԳՄՍՆԴՄ-11016/5 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պետական մարմին
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20.. թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ---- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
«25»«օգոստոս» 2023թ.ին
կնքված N ՀՀԿԳՄՆԴՄ-11016/5 պայմանագրի

ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

N/N	Անվանումը	Միջոցառման Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը գումար
1	Ծախմատի դասագիրք և վարժությունների տետր /2-րդ դասարան/									6300,0	6300,0	6300,0	6300,0	6300,0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք.Երևան,Կառավարական 2-շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005130
ՀՎՀՀ 02698732

Նախարարության գլխավոր բարտուղար Տնօրեն

Հ. Հանրության

Կ.Տ. /ստորագրություն/

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամ
ք. Երևան, Շնչենկո 34
«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700184178000100
ՀՎՀՀ 02560522

Ս. Լպռոյան

Կ.Տ. /ստորագրություն/

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 09.07.2024 14:53